ԱՆԱՀԻՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵՆՔ ԵՆՔ

Բանաստեղծություններ

ԵՐԵՎԱՆ

2018

ՀՏԴ 821.19-1
ԳՄԴ 84 (5Հ)-5
Դ 171

*Խմբագիր և առաջաբանի հեղինակ՝*
*ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ*

Դանիելյան Անահիտ
Դ 171 Հայաստանը մենք ենք: Բանաստեղծություններ / Ա. Դանիելյան. - Եր.: Արմավ, 2018. - 252 էջ:

Գրքի տարբեր բաժիններում ինքնակերպավորված հեղինակն ստեղծել է միասնական քնարական մի աշխարհ, որի գաղափարական ու զգացմունքային հիմնահանգույցը բոլորիս սիրելի Հայաստանն է, որ բանաստեղծուհին իրենն է համարում: Գեղարվեստական ընդհանրացման ձևերից մեկն է սա, որը հեղինակին տվել է ինքնարտահայտման լայն հնարավորություններ: Քնարական միջոցներով նա մարմնավորել է այսօրվա քաղաքացու մարդկային զգացմունքները, խոհերն ու մտորումները հայության ցավալի կորուստների, նրա հարատևման անմեկնելի գաղտնիքների մասին:

Հայաստանը պետական անձնուկ սահմաններով շրջափակված աշխարհագրական տարածք չէ միայն: Մեծ է բանաստեղծուհու հոգեմտավոր կեցության տիրույթը, որն ընդգրկում է հայության հազարամյակների պատմական հիշողությունը՝ առասպելական ժամանակներից մինչև Արցախյան պատերազմ, լեգենդացող հերոսներ ու մեր օրերի անարյուն հեղափոխության արձագանք, մայր, սեր, մշակութային մեծեր, ընկերներ:

Ժողովածուն «Ազգ – բանակ» կարգախոսի յուրատեսակ գեղարվեստական հիմնավորումն է:

ՀՏԴ 821.19-1
ԳՄԴ 84 (5Հ)-5

**ISBN 978-9939-78-010-8**

*© Դանիելյան Անահիտ, 2018*
*© «Արմավ», 2018*

ՄԵԿԵՆԱՍՆԵՐ՝
ՅՈՎՍԷՓ ԵՒ ԳԱՐՈԼԻՆ
ՆԱԼՊԱՆՏԵԱՆՆԵՐ

# ԱՆԿԱՇԿԱՆԴ ԱՍԵԼԻՔԻ ԱՍՊԵՏՈՒՀԻՆ

## Խմբագրի առաջաբանը

Բանաստեղծությունն առանց հանգավորման՝ ազատաչափ կարող է լինել, բայց առանց կենսական նոր բովանդակության ու չափ ու կշռույթի, մանավանդ առանց պատկերավորության՝ երբեք:

Միշտ ուժի մեջ է հին ճշմարտությունը՝ բանաստեղծ ծնվում են, չեն դառնում: Պարտադիր չէ, որ բոլոր հեղինակներն ունենան բանասիրական բարձրագույն կրթություն կամ գիտական աստիճան, ինչպես և պարտադիր չէ բոլոր դիպլոմավոր բանասերների՝ անպայման բանաստեղծ լինելը: Լավ բանաստեղծ լինում են ոչ միայն հասարակագետները, այլև բնագետները: Օրինակներ՝ որքան ուզեք:

Բնաբուխ բանաստեղծները միշտ էլ գրում են կենսական հանգամանքների թելադրանքով, որովհետև իրենց ներքին ձայնը հնչեցնելու պահանջ ունեն և ինքնարտահայտման ելք ու հնարավորություն են փնտրում: Նրանք այդպիսին ծնվում են... մասնագիտությունից անկախ:

Կարևորը աշխարհի և իրականության բանաստեղծական ընկալումն է ու թարմ ասելիքի յուրովի պատկերավոր վերարտադրությունը: Սա է ճշմարիտ արվեստի ճանապարհը և ոչ թե ինքնատիպ երևալու մարմաջով՝ ձևական ծամածռություններով և անդրմտային «հայտնագործություններով» ընթերցողին զարմացնելու անիմաստ ճիգերը:

Այդ ճանապարհով շատ արվեստագետներ են անցել և հասել հաջողությունների, այսպես է սկսվել նաև Անահիտ Դանիելյանի բանաստեղծական ուղին: Բնական օժտվածությամբ ու իրավաբանական կրթությամբ այս անհատականությունն ունի բանաստեղծական տեսողություն, իր տեսանկյունից անհաշտ կռիվ ունի իրականության տգեղությունների դեմ, արվեստի գեղեցիկով կյանքի վրա ներգործելու, գռեհկությունները վերացնելու իր ամե-

նօրյա անդուլ պայքարն է վերարծարծում բոլոր հնարավորություններով՝ բանաստեղծություններով ու արվեստի մակարդակը բարձրացրած նրբագեղ արհեստով՝ ոսկերիչ-արծաթագործությամբ, Հայաստանի և Սփյուռքի տարբեր հանդիսասրահներում, գրական-մշակութային զանազան միջոցառումներում հայ դասական ու ժամանակակից բանաստեղծների երկերի հետ միասին սեփական ստեղծագործությունները հանրահայտ ասմունքողներից ոչ պակաս վարպետությամբ, հայերենի բառային ու տրամաբանական ճշգրիտ շեշտադրումներով ու հնչերանգով ներկայացնելով ու մեկնաբանությամբ:

Քերթվածների յոթներորդ գրքով է «Որոտանի հավերժահարս» բանաստեղծուհին ներկայանում հանրությանը, ասել է թե՝ յոթ պատասխանատու հանդիպում «գերագույն դատավորի»՝ ընթերցողի հետ: Բայց սրանով հանդերձ՝ նա սեփական ստեղծագործությունները հաճախ է ներկայացնում համացանցային լայն լսարանին, որից ստացած հավուր պատշաճի գովեստները թեև երբեմն ապակողմնորոշում, բայց հիմնականում ավելի են մեծացնում հեղինակի պատասխանատվությունը սեփական խոսքի նկատմամբ: Իսկ այդ խոսքը մեր ժամանակակցի կողմից հենց մեր անհանգիստ ու լարված ժամանակի բանաստեղծական ընկալմամբ գեղարվեստական գնահատականն է, անկաշկանդ ասելիքի ասպետուհու սրտաբուխ ու անշփոթելի խոսքը, որի մեջ ցայտունորեն արտահայտված են Հայաստանի Հանրապետության քաղաքացի բանաստեղծուհու ազնիվ մտահոգությունները հայրենի պետականության, հայաստանաբնակ ու սփյուռքված հայության պատմական ճակատագրի շուրջ: Ահա ինչու խմբագրական միջամտության առանձնապես չեն ենթարկվել այն քերթվածները, որոնք կարող են ոմանց նույնիսկ անբանաստեղծական թվալ:

Հայաստանով ապրող ու շնչող քերթողուհուն ինչ լեզվով էլ որ կարդան՝ բոլոր ազգերի ընթերցողներն էլ կհասկանան, որ նա հայ բանաստեղծուհի է, ում երգերը հյուսված են հայաստանյան բնաշխարհի գույներից ու ձայներից, անարդարության դեմ ծառացած ըմբոստ սերնդի վճռականությունից, հայ մարդու զգացմունքներից ու խոհերից, հույսերից ու սպասումներից, մեր խաչքարե-

րի ու վանքերի զարդանախշերից, մեր լեռնաշխարհի ծաղիկների բույրերից ու երանգներից։

Հում ու մերկ գաղափարները, երբ «չեն թրծվում զգացմունքի կրակով» (Վարուժան), երբ դուրս են մնում արվեստագետի չափի զգացման կամ Թումանյանի ասած՝ «ոսկեսանձի» հսկողությունից, դառնում են չոր ճամարտակություն։ Այս արատը շատերին է բնորոշ. հատկապես ձոներգերում, ճչալով ասելիքը հայտնելու գայթակղությունից զերծ չէ նաև Ա. Դանիելյանը, սակայն, բարեբախտաբար, նա ավելի շատ զգացմունքի արտահայտիչ ու ազգային իղձերի պատգամախոս է, քան ճառախոս, և սա՛ է նրա երգերի հմայքի գաղտնիքը։ Եվ հաջողված են հատկապես այն բանաստեղծությունները, որոնք ազնիվ զգացմունքների ու գաղափարների, խոհերի ու մտորումների անկեղծ արտահայտություններ են՝ տաղաչափական համապատասխան ձևերով ներդաշնակված։ Դրանցից շատերն են մեղեդիավորվել և հնչում են մասնագետ երգիչների ու երաժշտախմբերի կատարմամբ։ Դրանք «հարմարեցված», շինծու հորինվածքներ չեն, որոնցով ողողված են այսօր ռադիոհեռուստաեթերն ու համերգասրահները, այլ մեղեդիներ ծնող, նրանց հետ ներդաշնակված «սրտի ուզած խաղեր»։

«Հայաստանը մենք ենք» ընդհանուր խորագիրը պատահական չէ, ինչպես որ պատահական չեն բաժինների թեմատիկ վերնագրերը։ Սակայն, սիրո թեմայով զուտ անձնական քնարերգությունը և բնության տաղերը չհաշված, ողջ գրքի կենտրոնաձիգ հիմնաթեման Հայաստանն է ու մեր ժողովրդի պատմական ճակատագրի շուրջ խորհրդածությունները։

Իր բանաստեղծական խառնվածքով Ա. Դանիելյանը մեղմ ու խաղաղ, նուրբ ու նրբագեղ չէ. ինչպես Մեծարենցը, Տերյանը, Համո Սահյանը կամ Վահագն Դավթյանը. իր պոռթկումային ընդվզող հեղափոխական բնավորությամբ նա ավելի շատ հիշեցնում է բռնկուն Պ. Դուրյանին, Չարենցին կամ Ծիրազին։ Վստահ եմ, որ այս տողերի ողջամիտ ընթերցողը երևույթների արտաքին նմանությունը չի ընկալի որպես բանաստեղծների արժեքային համեմատություն ու հեռու կմնա ոչ շահեկան եզրակացություններից։ Մեր խոսքը բանաստեղծական խառնվածքի ու տեսակի մա-

սին է: Բայց գրքի ուշադիր ընթերցողն էլ կհամոզվի, որ Ա. Դանիելյանի քնարերգությունը թեև չի հատկանշվում տաղաչափական ձևերի բազմազանությամբ, ու որոշ բանաստեղծություններ էլ առանձնապես չեն փայլում ձևի կատարելությամբ, սակայն ստուգապես կհամոզվի, որ հիմնականում ավանդական տաղաչափական ձևերով ու ավանդական թեմաներով հյուսված նրա բանաստեղծությունների զգալի մասն ունեն հուզական ու բովանդակային հզոր լիցքեր:

Ա. Դանիելյանի պարագայում ևս գործել է քնարական հերոսի և հեղինակի նույնացման սկզբունքը. անգամ նշանավոր հայորդիներին ու իր ընկերներին նվիրված ձոներգ - քերթվածների մեջ առկա է նրանց հանդեպ հեղինակային անմիջական վերաբերմունքը: Այսպես են ստեղծվել բոլոր բաժինները, անգամ բոլոր բանաստեղծությունները գաղափարական ու զգացմունքային միասնական հիմքով շաղկապող քնարական հերոսի՝ հեղինակի կերպարը, որը հայրենասիրական բարձր պաթոսով ուժգնորեն հնչեցնում է հայոց պետականության շուրջ համախմբվելով հզորանալու և Տիգրանի ոգով ու տիրոջ իրավունքով երկրին տեր կանգնելու իր արդարականչը.

*Վե՛ր կացեք, քաջե՛ր արդարամարտի,*  
*Եվ հողմերի դեմ շառաչե՛ք ուժգին,*  
*Ու՛ժ առեք գերված մեր Մասիսներից,*  
*Տիգրանի ոգով տեր մնանք Հայքին:*

*Ջոհասեղանին բախտն է մեր ազգի,*  
*Բռունցքվե՛նք հանուն պայծառ գալիքի...*

Բանաստեղծուհին շարունակում է մեր դասական քնարերգուներից եկող մի էական ավանդույթ՝ հայոց պատմության, հայ հայրենիքի ու պետականության արժևորումը ներկայի ու գալիքի դիրքերից: Սրա արդյունքն են մեր մոտիկ ու հեռավոր անցյալի հերոսական մաքառումների, խիզախ հայորդիների սխրանքների փառաբանումները՝ Տիգրանից մինչև Անդրանիկ ու Նժդեհ, Սար-

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անկաշկանդ ասելիքի ասպետուհին (խմբագրի առաջաբանը) . . . . 5
*Սամվել Մուրադյան*

## ԻՄ ՀԱՅԱՍՏԱՆ

ԻՄ ՀԱՅԱՍՏԱՆ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 12
ՏԻԳՐԱՆԻ ՈԳՈՎ ՏԵՐ ԼԻՆԵՆՔ ՀԱՅՔԻՆ . . . . . . . . . . . . . . . . 13
ՆԻԿՈԼ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 14
ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 15
ԱՐԴԱՐԱԿԱՆՉ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 16
ԽՈՆԱՐՀՈՒՄ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 17
ՔԱՆԴՎՈՒՄ ԵՆ ՄԵՐ ՇԵՆԵՐԸ... . . . . . . . . . . . . . . . . . . . . 18
ՀՐԱՆՏ ԴԻՆՔ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 20
ՍՅՈՒՆՅԱՑ ԱՐԾԻՎՆԵՐ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 21
ՆԱԻՐՅԱՆ ԵՐԿԻՐ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 22
ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻՑ՝ ԱՐՑԱԽ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 23
ՀԱՅՐԵՆԻՔ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 24
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 25
ԱՐԱ՜Ր... . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 27
ԿՈՄԱՆԴՈՍ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 28
ԻՄ ԴԱՐԱԿԵՐՏ ՀԱՅԱՍՏԱՆ . . . . . . . . . . . . . . . . . . . . . 29
ՀԱՎԵՐԺԻ ՃԱՄՓԻՆ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 30
ՀՈՒՅՍԻ ԵՂԵՌՆ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 31
ՈՐՈՏԱՆ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 32
ՀԱՅՈՑ ԽԱՉՔԱՐԵՐ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 33
ԱՐԱՐԱՏԻՍ ԳԱԳԱԹՆԵՐԸ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 34
ՆԱԽՆՅԱՑ ԵՐԿԻՐ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 35
ԶԱՐԹՈՆՔԻ ԵՐԳ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 36
ՀՈԳՈՒ ԿԱՆՉ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 37
ՄԱՍԻՍ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 38
ԱՐԱՐԱՏԻՍ ՑԱՎԸ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 39
ՀԱՌԱՉ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 40
ԻՄ ՄԻ ԿԵՍԸ ՏԱՐԵՔ ՎԱՆ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 41
ԷՐԵԲՈՒՆԻ ԵՐԵՎԱՆ–2800 . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 42

ՆԱԻՐՅԱՆ ԱՇԽԱՐՀ... . . . 43
ԾՈՎԻՑ ԾՈՎ ՀԱՅԱՍՏԱՆ . . . 44
ԻՆՁ ՏՈՒՆ ԿԱՆՉԻՐ . . . 45
ՋՈՐԱՑԵ՛Ք, ՀԱՅԵ՛Ր... . . . 46
ՍԱՐԴԱՐԱՊԱՏ . . . 47
ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀ . . . 48
ԵՐԵՎԱՆ–2800 . . . 50
ՀԱՂԹԱՆԱԿ . . . 52
ԱՆԵԾՔ . . . 53
ՄԵԿ ԴԱՐ Է ԱՆՑԵԼ... . . . 54
ԽՈՇՏԱՆԳՎԱԾ ՀՈՒՇԵՐ . . . 55
ՕՐՀՆԻ՛Ր, ՏԵՐ ԱՍՏՎԱԾ... . . . 56
ԷՅ ՇՈՒ՛Ն, ՇԱ՛Ն ԼԱԿՈՏ... . . . 57
ԿՌՈՒՆԿ . . . 58
ՄԵԶ ՆՈՐԻՑ ՄԻ՛ ԱՊՏԱԿԻՐ, ԿՅԱՆՔ... . . . 59
ԳԵՏԻ ԱՅՆ ԱՓԻՆ . . . 60
ԴԵՐ ՋՈՐԻ ՃԻՉԸ . . . 61
ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿ . . . 62
ՏՂԵՐՔԸ ԿԳԱՆ . . . 63
ԶԻՆՎՈՐ . . . 64
ՀԱՅՈՑ ԶԻՆՎՈՐ . . . 65
Ի՞ՆՉ ԻՄԱՆԱՄ . . . 66
ԱՆՈՒՆՍ ԳՐԵՔ . . . 67
ՆՈՐԱԹՈՒԽ ԶԻՆՎՈՐ . . . 68
ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ 25 - ԱՄՅԱԿԻՆ . . . 69
ՀԱՐՅՈՒՐ ՏԱՐԻ . . . 70
ԻՄ ՀԱՅՈՑ ԱՐՑԱԽ . . . 71
ՄԻ՛ ՏՎԵՔ ՄԵՐ ՀՈՂԵՐԸ . . . 72
ՍՐԲԱԶԱՆ ԲԱՌԸ . . . 73
ԶԻՆՎՈՐԻԿԸ . . . 74
ԲԱՐԻ ԼՈՒՅՍ, ՀԱՅԵ՛Ր... . . . 75
ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔԸ . . . 76

## ԼՈՒՅՍԻ ՍԵՐԸ

ՍԵ՛Ր... . . . 78
ԻՄ ԱԶՔԵՐԸ . . . 79

ՔՈ ԱՆՈՒՆԸ . . . 80
ՍԻՐՏՍ ԱՆՑՐԵՎԵՑ . . . 81
ՄԵՐ ՍԻՐՈ ԱՐՓԻ՜Ն... . . . 82
ՍԻՐՏՍ ՍԻՐՈՎ ԼՑՎԵՑ . . . 84
ԴԱՌՆՈՒԹՅԱՆ ԱՆՑՐԵՎ . . . 85
ԱԼԻՔՎՈՒՄ Է ԵՐԳՍ . . . 86
ՈՏՆԱՀԵՏՔԴ ՉԿԱՐ . . . 87
ՈՒՇԱՑԱԾ ՆԱՄԱԿ . . . 88
ԼՈՒՅՍԻ ՇՈՂ . . . 89
ԼՈՒՅՍԻ ՍԵՐԸ . . . 90
ԻՄ ԽԵՆԹ ԱՐԵԳԱԿ . . . 91
ՊՏՏՎԻՐ, ԻՄ ԻԼԻԿ . . . 92
ՍԻՐՈ ԵՐԿԻՆՔ . . . 93
ՃԵՐՄԱԿ ԵՐԱԶՆԵՐ . . . 94
ՏԵՐ ԱՍՏՎԱԾ, ՕՐՀՆԻՐ . . . 95
ԻՄ ԱՅՍ ԿՅԱՆՔՈՒՄ . . . 96
ՏԱՏՐԱԿԻ ԵՐԳԸ . . . 98
ՏԵՐ... . . . 99
ՍԻՐՈ ՆԵՏԸ . . . 100
ՍԻՐՏՍ . . . 101
ՀՈՒՅՍ, ՀԱՎԱՏ, ՍԵՐ... . . . 102
ԿՅԱ՜ՆՔ . . . 103
ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԵՐ... . . . 104
ՀՈԳՈՒ ԱՐԱՐ . . . 105
ԵՏ ՉԳԱՍ, ՍԵՐ ԻՄ... . . . 106
ՍԻՐՈ ԱՉՔԵՐԸ . . . 107
Ի՜Մ ԱՐԵՎ... . . . 108
ԲԱՑԻ՛Ր ԱՉՔԵՐԴ . . . 109
ԵՍ, ԴՈՒ ԵՎ ԾՈՎԸ . . . 110
ՄՈՄԵՐՍ . . . 111
ԼՔՎԱԾ ԱՐՇԱԼՈՒՅՍ . . . 112
ՄԱՆՈՒՇԱԿ . . . 113
ՍԻՐՏՍ ԵՄ ԿՈՐՑՐԵԼ . . . 114
ՀԱՎԵՐԺԱՀՈՒՅՍ . . . 115
ԱՄՊՈՏ ՀՈՒՇԵՐ . . . 116
ՑԱՎՈՏ ՀՈՒՇԵՐ . . . 118

ԼՈՒՍԻՆ . . . 119
ՊԱՏՐԱՆՔ ԷՐ ՍԵՐԴ . . . 120
ՍԻՐՏՍ ՍԻՐՈՎ ԼՑՎԵՑ . . . 121
ԱՂՋԻԿՆ ՈՒ ԾՈՎԸ . . . 122
ՍԻՐՈ ՀԱՄԱՐ ՊԻՏԻ ԾՆՎԵԼ... . . . 123
ԿՈՐԱԾ ԵՐԳՍ . . . 124
ՀԱՎԵՐԺԱՀՈՒՅՍ ԻՄ ՍԵՐ . . . 125
ԳԻՇԵՐ . . . 126
ԳՈՇԱՎԱՆՔ . . . 127
ՀՈԳՈՒ ՔԱՂՑ . . . 128
ԱՌԱՋԻՆ ՍԵՐ... . . . 129
ՋԱՐԹՈՆՔ . . . 130
ԱՆԹԵՂՎԱԾ ՀՈՒՅՍ . . . 131
ՎԵՐԱԴԱՐՁ . . . 132
ԱՇՆԱՆ ՄԵՂԵԴԻ . . . 133
ՄԻ ՕՐ ԿԳԱՍ . . . 134
ՄԻ ՕՐ . . . 135
ԼՈՒՌ ԵՍ, ԸՆԿԵՐ . . . 136
ԻՆՁ ԿՊԱՇՏՊԱՆԵՆ... . . . 137
ՀՈՒՇԵՐ . . . 138
ՍԻՐՈ ԾԻԱԾԱՆ . . . 139
ՏԽՐԱՄԱՇ ԼՌՈՒԹՅՈՒՆ . . . 140
ԵՐԳՍ ԱՆԿԱՐ Է . . . 141
ՌՈՒԲԻՆ ՔԱՐԸ . . . 142
ԻՄ ՍԵՐԸ . . . 143
ԵՍ ԵԿԵԼ ԵՄ, ՏԵՐ... . . . 144
ՏԵՐ ԱՍՏՎԱԾ... . . . 146
ՆԱՐԵԿԻ՛Ր, ՏԵՐ ԻՄ... . . . 147
ԵՐԱԶՆԵՐՍ ՉՔԱՑԱՆ . . . 148

## ՄԱՅՐ

ԱՅՍՕՐ ԴԱՌՆՈՒՄ ԵՍ 100 ՏԱՐԵԿԱՆ,
ԾՆՈՒՆԴԴ ՇՆՈՐՀԱՎՈՐ, ՄԱՅՐԻԿ... . . . 150
ԻՄ ՍՈՒՐԲ ՏԻՐԱՄԱՅՐ . . . 151
ԱՐԵՎԱԶՈՒՐԿ ԳԻՇԵՐՆԵՐ . . . 152

ՄԱՅՐԻԿԻՍ . . . 153
ԱՍՏՂԱԲՈՒՅԼ Է ՄԱՅՐՍ . . . 154
ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ . . . 155
ԻՄ ԱՆԳԻՆ ՄԱՅՐԻԿ . . . 156
ՀՈԳԻՍ ՑԱՎՈՒՄ Է, ՄԱ՛ՅՐ . . . 157
ՄԱ՛ՅՐ... . . . 158
ՄՈՐՍ ԽՐԱՏԸ . . . 159
ՄԱՍԻՍՎԱԾ ՄԱՅՐՍ . . . 160
ԼՍՈ՞ՒՄ ԵՍ, ԱՍՏՎԱԾ . . . 162
ՄԱՅՐ . . . 163
ՄՈՐՍ ՊԱՏԿԵՐԸ . . . 164
ՄՈՐ ՍԻՐՏԸ . . . 165
Ե՞ՐԲ ԿԳԱՍ, ՄԱՅՐԻԿ . . . 166
ՄԱՅՐԱԿԱՐՈՏ . . . 167
ՄՈՐՍ ՀԵՏ ԵՄ ՆՈՐԻՑ . . . 168
ԱՆՏՈՒՆ ԿԱՐՈՏ . . . 169
ՅՈԹ ՈՐԴԻ ԾՆԵՔ, Ո՜Վ ՀԱՅՈՑ ՄԱՅՐԵՐ... . . . 170

## ԵՐԳԵՐ

ՍԻՐՈ ՄԵՂԵԴԻՆ . . . 172
ԴՈՒ ԻՄ ՍՐՏԻ ՄԻՆՈՒՃԱՐ . . . 173
ՍԱՐԵՐԻ ԵՂՆԻԿ . . . 174
ՀԱՐՍԱՆԵԿԱՆ . . . 175
ՍԻՐՈ ԵՐԳ... . . . 176
ԵՂԲԱՅՐՍ . . . 178
ՄԱՍԻՍՆԵՐԸ ՄԵՐՆ ԵՆ . . . 179
ՀԵՔԻԱԹՆԵՐ . . . 180

## ՄԱՐԴ ԱՍՏՎԱԾ ԲՆՈՒԹՅՈՒՆ

ԴԱՌՆՈՒԹՅԱՆ ԳԻՆԻ . . . 182
ԹԱՍՍ ԼՑՐՈՒ՛, ԱՐԵՎԻ՛Ր... . . . 183
ԷԼԻ ՄԵԿ ԳԻՆԻ... . . . 184
ՀԱՐԲԵԼ ԵՄ ՈՒԺՈՒ՜Մ... . . . 185
ԳԻՆԻ . . . 186
ՏՐՏՄՈՒԹՅԱՆ ԳԻՆԻ . . . 187

ՆՌԱՆ ԳԻՆԻ . . . 188
ՓԱԹԻԼՎՈՒՄ Է ԱՄԱՆՈՐԸ . . . 189
ՓԱԹԻԼ . . . 190
ԱՄԱՆՈՐ . . . 191
ՁՄԵՌ . . . 192
ԵՂԲԱՅՐ . . . 193
ԴԱԺԱՆ ՓԱԽՈՒՍՏ . . . 194
ԵՐԵԽԱՆԵՐ ԾՆԵՔ... . . . 195
ԵԿԵՔ ՃԻ՛ՇՏ ԱՊՐԵՆՔ... . . . 196
ԳԵՏԱԿ . . . 197
ՀԱՅԻ ԲԱԽՏ . . . 198
ՊՈԵՏ . . . 200
ԲԱՐՈՒԹՅԱՆ ԲՈՒՅՐԸ . . . 201
ԳԱՐՆԱՆ ԾԻԾԵՌ . . . 202
ԱՐԻ ՏՈՒՆ . . . 203
ԲԱՑԱՍՈՒՄ . . . 204

## ՄԵՐ ՄԵԾԵՐԻՆ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐԻՍ

ՇԻՐԱԶ . . . 206
ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐ . . . 207
ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ . . . 208
ՄԱԵՍՏՐՈ ՉԵՔԻՋՅԱՆԻՆ . . . 209
ԽԱՉԱՏՈՒՐ ԱՎԵՏԻՍՅԱՆ - 90 . . . 210
ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ . . . 211
ՀՈՎՍԵՓ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 35 ԱՄՅԱԿԻՆ . . . 212
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱԴԱԼՅԱՆ - 90 . . . 213
ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆՅԱՆ - 90 . . . 214
ՌՈՄԻԿ ՍԱՐԴԱՐՅԱՆԻՆ . . . 215
ԱՅԴ ԴՈՒ՛ ԵՍ, ԴՈՒ՛, ԱՆԱՀԻՏ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ . . . 216
ԼԵՎՈՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ . . . 217
ԲԵՄԻ ԹԱԳՈՒՀԻ ԷՎԵԼԻՆԱ ՇԱՀԻՐՅԱՆԻՆ . . . 218
ԱՐԱՔՍ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ . . . 219
ԺԱՆՆԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ . . . 220
ՀԱՍՄԻԿ ՍԵՐՄԱՐԻՋԱ . . . 221
ԸՆԿԵՐՈՒՀՈՒՍ՝ ՆԵԼԼԻԻՆ . . . 222

ԵՐԳՉՈՒՀԻ ԱՆԱՀԻՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ . . . . . . . . . . . . . . . . . . . 223
ՍՈՒՍԱՆՆԱ ԴԱՎԹՅԱՆԻՆ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 224
ԸՆԿԵՐՈՒՀՈՒՍ՝ ԼԵՆԱՅԻՆ... . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 225
ՆԱՐԻՆԵԻՆ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 226
ԻՇԽԱՆԱՍԱՐԻ ԴՈՒՍՏՐ ՆԱԶԵՆԻ . . . . . . . . . . . . . . . . . . . . 227
ԱՇՈՏ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 228
ՍԻՄՈՆ ԱՉԻԿԳՅՈԶՅԱՆԻՆ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 229
ԴԵՎ...ԴԱՎԻԹ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 230
ԱՊՐԻԼՅԱՆ ՔԱՌՕՐՅԱՅՈՒՄ
ԸՆԿԱԾ ՀԵՐՈՍ ՄԻՇԱ ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ . . . . . . . . . . . . . . . . . 231
ԱՐԹՈՒՐ ԱԲՐԱՀԱՄ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 232
ՓԱՌՔԴ ՇԱՏ, ԱԼԲԵՐՏ ՂԱԶԱՐՅԱՆ . . . . . . . . . . . . . . . . . . . 233
ԳԵՎՈՐԳ ՍԵՐՈԲՅԱՆԻՆ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 234

## ԸՆԾԱՆԵՐ

ԱՆԱՀԻՏ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 235
*Հովհաննես Ղազարյան*
ԱՆԱՀԻՏ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 236
*Ռոմիկ Սարդարյան*
ԱՆԱՀԻՏ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 237
*Ռոմիկ Սարդարյան*
ԱՅԴՊԵՍ Է ԱՊՐՈՒՄ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 238
*Սամվել Միքայելյան*
ԱՆԱՀԻՏ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 239
*Համիկ Սերմարիչա*
ՇԱՔԻԻ ՋՐՎԵԺ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 240
*Անհայտ հեղինակ*
ԴԱՍԸՆԿԵՐՈՒՀՈՒՍ... . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 241
*Անուշ Մուրադյան*

# ԱՆԱՀԻՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ (ԱՆԱԻՍԻՍ)

# ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵՆՔ ԵՆՔ

Բանաստեղծություններ

ANAHIT DANIELYAN (ANAISIS)

# MY ARMENIA

Poems

*Հրատարակչության տնօրեն՝ Արմինե Քոչարյան*
*Խմբագիր՝ Սամվել Մուրադյան*
*Ձևավորումը՝ Արշալույս Արզումանյանի*
*Սրբագրիչ՝ Արմենակ Ղազինյան*

*Չափսը՝ 60x84 1/16*
*Թուղթը՝ օֆսեթ 80 գ/մ*$^2$ 1.5 ուռ.
*Ծավալը՝ 15.75 տպ. մամուլ*
*Տպաքանակը՝ 500*
*Տառատեսակը՝ Ghabuzian Gohar*
*Գինը՝ պայմանագրային*

ԱՐՄԱՎ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

издательство **АРМАВ**

Ք. Երևան, Շիրազի 24 շ. 48 բն.
հեռ.՝ 099 37-31-30
էլ.փոստ՝ armav-hrat@mail.ru

Г. Ереван, ул. Шираза 24 д. 48 кв.
тел.՝ +374-99-37-31-30
Email: armav-hrat@mail.ru